ՍՓՅՈՒՌՔԻ ԴԵՐԸ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ

ԳՐԻԳՈՐՅԱՆ Է. Ռ.

Ապազգայնացումը որպես առաջընթացի գրավական: *Սփյուռքի գործոնը երկար ժամանակ մնում էր գիտական հետաքրքրությունների ստվերում: Այսուհանդերձ, սոցիոլոգիայի տեսանկյունից էթնիկ սփյուռքների երկարատև գոյությունը որպես սոցիալական կազմավորումների ամբողջություն՝ հաստատեց երեք իրողություն.*

ա. Ցեղը պետության համեմատ առաջնային է, պետական կազմավորումները փոխվում են, ազգերը ցանկացած պետությունից առավել պահպանողական են:

բ. Պետությունն իր ողջ ցանկությամբ և քաղաքականության նպատակաուղղվածությամբ միշտ չէ, որ կարողանում է ձուլել, ասիմիլացնել, իրեն ենթարկել սփյուռքներ, հաճախ էլ նա ինքն է դառնում սփյուռքների նպատակների իրականացման գործիք, կամակատար:

գ. Սփյուռք կարելի կոչել իր ծագման երկրի՝ հայրենիքի սահմաններից դուրս ապրող ազգային խմբավորումը միայն այն դեպքում, եթե նրանում առկա է ինքնակազմակերպման կարողությունը, հենց վերջինն էլ աջակցում է սփյուռքի գոյությանը: Դա է պատճառը, որ ոչ բոլոր էթնիկ խմբավորումներն ունեն սփյուռքի կարգավիճակ:

Քանի որ իրականում գոյություն չունեն միաէթնիկ պետություններ, նույնիսկ ՀՀ բնակչության 5-7%-ը այլ ազգերին են պատկանում, ուստի պետություններն իրենց գործառույթներն իրականացնելիս պետք է նկատի ունենան մի այնպիսի անտեսված գործոն, ինչպիսին պետությունում հանուն առաջատար դիրքերի սփյուռքների մղած պայքարն է:

Քաղաքացիական պետության մասին ազատականների հոգեզմայլ տեսությունն առասպել է, որից հետք չի մնում, երբ խորապես ուսումնասիրվում է սփյուռք ունեցող պետությունների գործունեությունը:

Բազմաթիվ հեղափոխական և պատմական հեղաշրջումներ ավելի շուտ բացատրվում են ազգամիջյան հակամարտություններով, հանուն իշխանության սփյուռքների պայքարով, քան փառաբանված դասակարգային պայքարով:

Հայտնի սոցիոլոգ Վ. Զոմբարտը գրել է. «Հավաստի ճշմարտություն է, որ XVII և XVIII դարերում չի եղել և ոչ մի գերմանական պետություն, որը չունենար մեկ կամ մի քանի՝ ազգությամբ հրեա պալատականներ, որոնք կառավարում էին մեծահարուստների ֆինանսատնտեսական հարցերը: Երկրների ֆինանսական հնարավորությունները զգալիորեն կախված էին նրանց աջակցությունից»[1]*:*

Ավելին, ինչպես գրում է Հենրիխ Շնեն՝ «Բոլոր կարևորագույն ներքաղաքական իրադարձություններում՝ ինչպես դիվանագիտական առաքելություններում, պաշտոնների բարձրացման, թագավորների թագադրման, իշխանների կոչումների

[1] **Шнее Г.** *Ротшильд. История династии финансовых магнатов, М., 1993, с. 3.*

շնորհման, պատերազմների ֆինանսավորման և այլ հարցերում ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրենց մասնակցությունն էին ունենում պալատական ֆի-նանսիստները՝ առնելով և ծախելով հողեր, փոխանցելով սուբսիդիաներ»[2]: Այդ իսկ պատճառով Գերմանիայի համար (նաև շատ այլ երկրների համար) կարելի էր առանձնացնել արտաքին քաղաքականության երկու ուղղություն. առաջինը՝ գերմանական պետության և երկրորդ՝ հրեական սփյուռքի հետաքրքրությունները ներկայացնող ուղղությունները: Իհարկե, որոշ հարցերում դրանք արմատապես տարբերվում էին, և պարտադիր չէր, որ պետական կամ, ինչպես այժմ է ընդունված ասել, ազգային շահը գերակայեր (ի՞նչ արժեք կարող էր ունենալ դա ասենք Ռուսաստանի համար): Օրինակ՝ իբր թե գերմանացիների պահանջով ի հայտ եկած կենսական տարածքների տեսությունը, որը որպես խայծ ծառայեց Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների համար, դժվար թե ծնված լիներ պատմականորեն գոյություն ունեցող սրբազան Հռոմեական քրիստոնեական կայսրությունում ապրող գերման ժողովրդի գաղափարախոսությունից. այն նախևառաջ անհրաժեշտ էր աճող կապիտալին՝ նոր ֆինանսական շուկաներ ձեռք բերելու համար:

Ճիշտ այդպես այն, ինչ կոչվում էր Ռուսաստանի XIX-XX դդ. դասակարգային պայքար, ավելի շուտ իշխանությունը գրավելու պայքար էր Գերմանիայի արտաքին քաղաքական էքսպանսիայի և արդեն ամրապնդված համաշխարհային հրեական սփյուռքի շահերի միջև: Թուրքիայում համանման պայքար բռնկվեց հայերի, հույների և հրեաների միջև, որը, ըստ էության, արտացոլում էր անդրկուլիսյան սուբյեկտների՝ Անգլիայի, Ռուսաստանի և Գերմանիայի շահերը:

Դժբախտաբար, այնպիսի մշակութային ազգի առաջնորդները, ինչպիսին հայ ժողովուրդն էր, ընկել էին դասակարգային տեսությունների թակարդը և չկարողացան քաղաքական խարդավանքների և գաղափարական բուտաֆորիայի սարդոստայնում ճանաչել իրենց արմատական շահերը և կառուցել գործողությունների համապատասխան մարտավարություն:

Մշակելով դասակարգային տեսություններ՝ նրանց գաղափարախոսները նպատակ էին հետապնդում հավասարության, եղբայրության և արդարության հենց իրենց կարգախոսներով ոգեշնչված քաղաքացիների ձեռքերով ներսից կործանել ֆեոդալական աստիճանակարգը՝ հիերարխիան: Այդպես էլ եղավ, այն կործանվեց, սակայն արմատական քաղաքական դիրքերում հայտնվեցին երրորդ դասի ներկայացուցիչները, որոնք այդ գործընթացում ամենաքիչ օգուտը կարող էին բերել: Պրագմատիզմի փիլիսոփայությունը մշակված գործիք էր ընդամենը, որն առաջ էր մղում իրենց ժողովուրդների այդ կույր առաջնորդներին՝ խլացնելով ձեռներեցի, գործարարի առանց այդ էլ մթագնած գիտակցությունը, նրանք ձգտում էին դեպի նյութական բարեկեցություն, հասարակական շահի, երկրի բնակչի բարոյական

[2] Նույն տեղում, էջ 4:

կերպարի, սոցիալական համերաշխության սահմանագծման, ձգտում էին դեպի ճշմարտություն, որը, որպես այդպիսին, կապ չուներ քաղաքական վերնախավի կոնյունկտուրայի հետ: Ահա թե ինչու այսօր ԱՄՆ-ը, որպես զարգացած պրագմատիզմի երկիր, կամ ավելի ճիշտ՝ պրագմատիզմին գերի երկիր, արդեն ի վիճակի չէ պատրաստել գիտնականներ, այլ նրանց պետք է բերի այլ երկրներից, որտեղ գիտական որոնում հասկացությունը դեռևս չի կորցրել իր իմաստը:

Ֆեոդալական հիերարխիաները, սակայն, չեն անհետացել, պարզապես անկում է ապրել նրանց գաղափարական աստիճանը. բյուզանդական ֆեոդալը, օրինակ, կարող էր հավակնել կայսեր գահին, բայց ձեռնարկատերերի այսօրվա շերտը պետք է ձգտի հասնել իշխանության միայն կուսակցական-քաղաքական ճյուղավորված համակարգի միջոցով, որի բոլոր օղակները գտնվում են արթուն հսկողության տակ: Բուրժուական հեղափոխությունների փորձը հաշվի էր առնվել, և Եվրոպայի (Ռուսաստանի) հետհեղափոխական երկրներում ուժեղացվել էին քաղաքական կարգերի հնարավոր փոխակերպման պատնեշները:

Այդ կիսաֆեոդալական հիերարխիաներն այսօր գոյություն ունեն հզոր կորպորացիաների ձևով, որոնք իրենց ներկայացուցիչներին իշխանության են բերում: Պետությանը իրենց կամքը թելադրող անդրազգային ընկերությունները որքանո՞վ են հզոր, և կամ հումքային մոնոպոլիաները որքանո՞վ են տարբերվում ֆեոդալական կալվածքներից: Այսօր գոյություն չունի բնատնտեսություն, բայց իրենց աշխատակիցներին տառացիորեն ամեն ինչով ապահովող այդ ընկերությունները, որոնք նույնիսկ ունեն իրենց կրոնական հոսանքները և ինստիտուտները, հասարակությունից առավել առանձնացված են, քան միջնադարյան ֆեոդալները: Ասպետական ասպազենը փոխարինվեց տեղեկատվական զենքով, սակայն չփոխվեց սուբյեկտի սոցիալական դիրքորոշումը, տարբերությունը միայն այն էր, որ ասպետական հավատարմությունը փոխարինվեց կորպորատիվ էթիկայով, իսկ ֆեոդալական զորքը՝ մասնավոր բանակներով, պահակախմբերով և բարձրագույն օղակի կառավարիչներով՝ թոփմենեջերներով:

Հավասարության, եղբայրության պահանջմունքներն իրականում յուրաքանչյուր հիերարխիայի դեմ պայքարելու ընդհանուր բանաձևեր են: Եթե անհատը կամ խումբը գտնվում է ձևավորված հիերարխիայից դուրս, իսկ այդպիսին է սփյուռքի նախնական կայացումը, ապա մաթեմատիկորեն արդյունավետ է համարվում ամեն ինչի հավասարության պահանջը, այլ կերպ ասած, «հռոմեական պատրիկների» շարքում միանգամից օտար խմբերի ներառումը:

Սոցիալական գաղափարախոսության մեջ նման դիրքորոշման առկայության պայմաններում կարելի է միանգամից բնութագրել «սփյուռքյան ձեռքի» ներկայությունը:

Սովորաբար սոցիալական հիերարխիան ունի փոխհատուցող և գործառութային բնույթ. այնտեղ բարօրությունը և պատասխանատվությունը ուղիղ համեմատական

են, և ուժեղին պահելու ծախսերը փոխհատուցվում են նրա պաշտպանական գործառույթով:

Սփյուռքն այսօր, հատկապես համաշխարհային հանրության գլոբալացման խորացվող միտումների պայմաններում, ողջ մարդկության պատմական զարգացման արդյունք է: Նրա ազդեցությունը անվիճելի է ոչ միայն համաշխարհային տնտեսության վրա, այն լուրջ մշակութային և գաղափարական ազդեցություն է գործում այն ժողովրդի ազգային ինքնագիտակցության վրա, որի ներկայացուցիչներից ձևավորվել է, ինչպես նաև այն պետության վրա, որտեղ այն գոյություն ունի:

Չնայած այն յուրահատուկ պայմաններին, որոնց մեջ դրված են սփյուռքները, դրանք շատ արագ են զարգանում: Միգրանտները հաճախ զրկված են լինում տարրական բարիքներից և համապատասխան սոցիալական կարգավիճակի հասնելու համար իրենց ծնունդով արդեն իսկ համարվելով օտար, ավելի մեծ ջանքեր են գործադրում: Սակայն հենց այդ պայմանները միաժամանակ նպաստում են, որ այդ օտարներն աշխատեն առավել արդյունավետ, քան տեղաբնիկները, լինեն առավել աշխույժ և շարժուն: Միգրանտների չարտոնված խավերից շատ արագ առաջ են քաշվում նման անհատները, և երկրորդ՝ վատթար դեպքում երրորդ սերունդը դառնում է իր բնակության երկրի լիիրավ քաղաքացի: Շնորհիվ միգրանտների հենց այդ որակի՝ ԱՄՆ-ն հասել է տեխնիկական և տնտեսական ապշեցուցիչ արդյունքների, նրան հաջորդող Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան և արաբական երկրները ևս պարտական են սփյուռքյան զանգվածներին:

Միգրանտների արժևորման գիտակցությունն էլ կյանքի կոչեց բիզնեսի մի ողջ ուղղություն, որը կոչվեց «ուղեղների որս»: Վերջինիս ակտիվացման շնորհիվ նոր հոսանքներ և գիտատեխնիկական խմբեր ընդգրկվեցին սփյուռքյան կառույցներում: 90-ական թվականներին Խորհրդային Միության վերացումից հետո առավել գիտուն, տեղեկացված միգրանտների «թարմ արյունը» հոսեց դեպի մի շարք երկրներ և սփյուռքներ՝ միաժամանակ բարդացնելով և ուժեղացնելով դրանք (իրականում նրանք կարող էին առավելագույնս օգտվել այդ գործոնից):

Շատ սփյուռքներ հասան երկքաղաքացիության, իսկ մի մասը դարձավ բնակության երկրի վրա իր հայրենիքի ազդեցության առաջատարը: Տիպական է այն իրավիճակը, երբ էթնիկ խմբավորումների ակտիվիստներն ու առաջնորդները լոբբիստական գործունեություն են ծավալում իշխանությունների միջանցքներում, իրականացնում են PR արշավներ տեղական ԶԼՄ-ում, ընդհանրական բնույթի քաղաքական հայտարարություններ են անում: Նրանցից ոմանք աստիճանաբար ընդգրկվում են տեղական իշխանության վերնախավում՝ որպես հաստիքային աշխատողներ: Բնակության երկրում պետական կառավարման կարևոր խնդիրներից է ողջ բնակչության օրինապահության ապահովման ուղղությամբ շրջանների նկատմամբ իրականացվող ընդհանուր քաղաքականությունը: Այս համատեքստում անխուսափելի անհրաժեշտություն է դառնում բնակչության

միավորումը առանձին ծրագրերով՝ մշակութային, կրոնական, սոցիալական և այլն: Զուլմանը հաջորդող գործընթացների վրա այդ միավորման ուժը և աստիճանը ուժեղ են, և սփյուռքների համար չափազանց դժվար է դրանցից ձերբազատվել: Ուրեմն էլ ո՞վ, եթե ոչ սփյուռքները կարող են ակտիվորեն մասնակցել նաև այդ միավորման ուղղության կարգավորմանը՝ ներարկելով նրան էթնոմշակութային հատկանիշներ: Որտեղի՞ց ի հայտ կգար բնության մեջ երբեք գոյություն չունեցող՝ ԽՍՀՄ ժողովուրդների մեծ մասին օտար, խորհրդային մշակույթը, եթե չլինեին ավելի վաղ հուդայականության մեջ ստեղծված կիբուցների օրինակները:

Բազմաթիվ կազմակերպական ձևերը, որոնց ներսում դրսևորվում է սփյուռքների ակտիվությունը, տարածվում են երկու բևեռներում՝ ձուլման սպառնալիքի և նեղ, փոքր էթնոմշակութային միջավայրում ներփակվելու վտանգի միջև: Պետությունն իր հերթին ընտրողաբար է վերաբերվում սփյուռքներին՝ մեկին տալով առավելագույն բարեկեցության կարգավիճակ, մյուսին՝ «նստակեցության հատկանիշ», մի մասը օրուգիշեր չի իջնում էկրաններից, թեև ցուցադրում է իր ծայրահեղ ճղճիմությունը կամ ստորությունն ու գռեհկությունը, իսկ մյուսները սսկված կուլ են տալիս իրենց հասցեին նետված ժարգոնային վիրավորանքները միայն:

Օրինակ՝ Եվրոպայում կամ ԱՄՆ-ում անհնար է ռուսական սփյուռքի հասցեին լսել որևէ բացասական արտահայտություն: Խորհրդային Ադրբեջանում կամ Վրաստանում՝ մամուլում կամ հեռուստատեսությամբ հայերի մասին հիշատակումը անմիջականորեն զուգորդվում, նույնացվում էր քրեական խրոնիկայի հետ: Նման ստորությունների սցենարիստները հույս ունեին, որ այդպիսի ողորմելի պրոպագանդիստական ազդեցությունը կհեռացնի հայ երիտասարդներին իրենց ազգային ինքնությունից, սակայն ստացվեց ճիշտ հակառակը՝ նրանց բռունցքները սեղմվում էին բուռն ցասումից ու անարդարությունից, և նրանք պատրաստ էին պաշտպանել ցանկացած՝ անգամ եռակի հանցագործ հայի: Այդպես տասնամյակներով զսպված ցասումը ի հայտ եկավ և վերաճեց Ղարաբաղի հայության ազգային-ազատագրական պայքարի:

Սփյուռքների հանդեպ վերաբերմունքը մեծապես կախված է քաղաքականությունից, համապատասխան երկրների հետ հարաբերությունների բարելավումից կամ վատթարացումից: Հնարավոր են նաև պարադոքսներ: Օրինակ՝ թեև հարաբերությունները Ռուսաստանի և Վրաստանի միջև վատթարացան, և վրացիների՝ Ռուսաստան մուտք գործելը բարդացավ, բայց այդ ժամանակահատվածում սկսեցին բողոքել հենց հայերը (գուցե Արևմուտքն իր ազդեցության խողովակներով Ռուսաստանում ըմբոստացող հայերին հասկացնել էր տալիս այն հնարավոր միջոցների մասին, որոնք ձեռք էր առնելու ՀՀ ղեկավարությունը՝ կապված հայ-թուրքական արձանագրությունների հետ), իսկ վրացական մշակույթի գործիչներն այդ նույն պահին Ռուսաստանում իրենց շոուաստղերի հրավառությունն էին կազմակերպում: Ռուսական հեռուստատեսությունը սկսեց գովազդել վրացական ռեստորանները, բալետի էքս-պրիմա պարուհիներին,

իսկ լրագրողները՝ «թղթային վարպետները», սկսեցին արտահայտել իրենց սերն արևային Վրաստանի հանդեպ և այլն: Այս ամենը, անշուշտ, պաշտոնական Կրեմլի վարած քաղաքականության հետ աղաղակող հակասություն էր կազմում: Ահա պետության արտաքին քաղաքականության ազգային և սփյուռքյան հետաքրքրությունների միջև երկփեղկվածության ևս մի օրինակ:

Սակայն որքան էլ ինքնատիպ դրսևորվեն փոխհարաբերությունները սփյուռքների և բնակության երկրների միջև, մի բան վեր է կասկածից, և այն կարող է արձանագրվել որպես սոցիոլոգիական օրենք. Բնակության երկրի և ծագման երկրի կայուն և բարեկամական փոխհարաբերություններին աջակցելը բխում է հենց տվյալ սփյուռքի շահերից: Եվ հակառակը՝ բնակության երկրի հարաբերությունները այլ երկրների հետ նման եղանակով չկարգավորելը նրանց միջև թշնամանք ի հայտ կբերի:

Պատերազմների ժամանակ սփյուռք ունեցող ժողովուրդների արտաքսումը կամ պոտենցիալ համախոհ սփյուռքյան ժողովուրդների կողմից բնակության երկրի պաշտպանությանը սպառնալիք ներկայացնելը, նրան թշնամաբար տրամադրվելը միանշանակ դեմ են սփյուռքի շահերին:

Այստեղից միանշանակ կարելի է հանգել այն եզրակացության, որ բնակության երկրի և հայրենիքի միջև հարաբերությունների կարգավորումն ու ամրապնդումը, դրանց վերաճումը բարեկամական հարաբերությունների՝ այն ճանապարհն է, որը պետք է ուղղորդի սփյուռքին:

Պետությունների արտաքին քաղաքականությունների բազում տեսանկյուններ հասկանալի են դառնում այս ենթատեքստում, թեև այդ ամենը շատ հազվադեպ է բացահայտ հիշատակվում: Սովորաբար քաղաքական գործիչները պատերազմների ծագումը բացատրում են՝ հիմք ընդունելով նավթային գործոնը, ամբողջատիրական վարչակարգը (թեև դժվար է պատկերացնել առավել ամբողջատիրական վարչակարգ, քան ԱՄՆ-ինն է), տարածքային կամ միջկրոնական հակասությունները, «անջատական երկրի» կարգավիճակը կամ չարիքի վրա կենտրոնացումը: Այսուհանդերձ, այնպիսի պայմաններում, որտեղ սփյուռքների դերն աճում է, դրանց շահերը սկսում են գերակայել այդ պետությունների արտաքին քաղաքականության մեջ: Օրինակ՝ չնայած Ուկրաինայում Կանադայի ուկրաի-նական սփյուռքի մղած մարտերին, կեղծ ազգային շահը ադոտ կերպով է ներկայացված քաղաքական վերնախավի գունապնակում: Կամ այդ ի՞նչ սեր է տածում ամերիկյան բանակը թանգարանների հանդեպ, որ Իրաքում տեղի ունեցող պատերազմի հիմնական ռազմավարը դարձել է Բաբելոնի թալանված թանգարանը, երբեմն այն անվանում են ոչ թե Ծոցի պատերազմ, այլ Թանգարանի պատերազմ: Սակայն, եթե մի բնական հետաքրքրություն ցուցաբերենք դեպի Իսրայելի պատմությունը, ապա ակնհայտ կդառնա, թե ինչ առաքելություն են իրականացրել ԱՄՆ-ի բանակը և նրա դաշնակիցները (իհարկե, մյուս, ոչ պակաս կարևոր նպատակների շարքում), և ինչու է խեղկատակ Թ. Բլերը այսօր կանգնել Բրիտանա-

կան դատարանի առջև: Դա պատիվ է բերում անգլիական արդարադատությանը և ցույց է տալիս, որ «պատիվ» բառը դեռ վաղ է ջնջել անգլերենից:

Ելնելով այս և նմանատիպ այլ փաստերից՝ հասկանալի է, թե ինչու է մեր վերաբերմունքն այդքան սկեպտիկ այդ չափազանց կարևոր «ազգային շահի» կարգին դասվող պաշտոնական փաստաթղթերի հանդեպ: Մի՞թե ազգային շահով չեն ոգեկոչվել Իրաքի և Աֆղանստանի վրա իրագործված հարձակումները: Իսկ ավելի վաղ Թուրքիայի ազգային շահով էր բացատրվում հայերի զանգվածային ոչնչացումը, որը վերաճեց անօրինակ ցեղասպանության և հայրենազրկման:

Համաշխարհայնացման պայմաններում դաշինքներում ընդգրկված համահարթեցվող ազգերի ու պետությունների նկատմամբ դաշինքների ու ԵՄ-ի նման ժամանակակից կայսրությունների հետաքրքրությունը այս կամ այն ազգի մշակույթի հոգևոր կամ գիտական զարգացման հանդեպ վերածվել է անհետացող չնչին մեծության՝ ծայրահեղ դեպքում որպես արևմտյան կողմնորոշում ունեցող տարածաշրջանի հանդեպ վերաբերմունքի դրսևորում:

Երբ վերաբաժանվում է համաշխարհային հարստությունը, շատ ազգեր և պետություններ դառնում են ավելորդ: Արդյոք դա մարդկության էվոլյուցիոն ճակատագի՞րն է, թե՞ նրա ամենավատ փուլը՝ ցույց կտա մոտ ապագան:

ԱՆՑՈՒՄ ՄԵՏԱԷԹՆԻԿՈՒԹՅԱՆ

Երբ էթնիկապես միասնական սփյուռքը չունի իրապես գոյություն ունեցող պատմական հայրենիք, կամ նրա հետ կապերը բարդացված են, և կամ եթե ազգի մասնատված հատվածները ցրված են բազմաթիվ պետությունների լայնածավալ տարածքներում, ապա իր շահերը պետության ճնշումից պաշտպանելու օբյեկտիվ անհնարինության պայմաններում միակ տրամաբանորեն արդարացված տարբերակը (նույնիսկ մաթեմատիկորեն արդյունավետ) նրանց տեսակետների միջազգայնացումն է, դրանց վերածումը մետաէթնիկականի, «համամարդկային» խնդիրները և իրենց խնդիրների ներկայացումը արդեն այլ մակարդակներում՝ միջպետական և միջազգային հարաբերությունների, միջազգային կազմակերպությունների և գերտերությունների կառավարությունների ձևաչափով:

Ազգային պետության նեղ աշխարհից դուրս պրծնելու ցանկությունը նմանվում է արագընթաց ավտոմեքենայի այն վարորդի զգացողությանը, որը լայն մայրուղու վրա իր առջևից ընթացող ձիակառք է տեսնում, որին չի կարելի վազանցել: Այդպես էլ տիրող հնացած կարգերը ուղիղ համեմատական են տիտղոսակիր բնակչության մակարդակին և հոգեբանությանը, անգթորեն կեղեքում և ճնշում են արագընթաց մտավոր և մասնագիտական որակներն ու կարողությունները, որոնք չեն կիրառվում իրենց տեղական տնտեսություններում, առավել ևս, երբ դրանց հեղինակները օտար ծագում ունեցողներ են: Այստեղից էլ հետևում է, որ կամ այդ ձիակառքը պետք է ուղարկել գրողի ծոցը, հեղափոխություն իրականացնել կամ կառուցել արդիական

ավտոմայրուղիներ՝ թողնելով այդ արխաիզմը հետևում, ներքևում: Այստեղից բխում է մի հզոր գաղափարախոսական միտում, որն արդի աշխարհում վերածվել է համաշխարհայնացման ռազմավարության:

Համաշխարհայնացման գործընթացն ի հայտ է բերել մի զարմանալի իրողություն՝ սփյուռքները կառավարում են աշխարհը, սահմանում են միջազգային նորմեր, ձևավորում են կառավարություններ և պետություններ, նույնիսկ առաջ են քաշում համաշխարհային կառավարություն ստեղծելու հարցը: Լայն իմաստով կարելի է ասել, որ վերջին կես դարում համաշխարհային գործընթացները իրականանում են սփյուռքների տնտեսական և նույնիսկ գաղափարական գերակայությամբ: Աննախադեպ բարձր է նրանց դերը կյանքի տնտեսական, էթնոմշակութային, սոցիալական, քաղաքական և նույնիսկ աշխարհաքաղաքական ոլորտներում: Ժամանակակից շատ գաղափարական և տնտեսական ուսմունքներ սփյուռքյան հոգեկերտվածքի պտուղներ են, ահա թե ինչու արժե առավել մանրակրկիտ ուսումնասիրել այն:

ԱՄՆ-ը սփյուռքների դասական երկիր է, աշխարհի ինքնատիպ էթնիկական մոդել, որտեղ լիարժեք դրսևորվել են սփյուռքյան գոյության և՛ առավելությունները, և՛ թերությունները: Այդ երկրի գոյության ողջ ժամանակահատվածում անընդհատ դեպի այնտեղ են ուղղորդվել արտագաղթողների հոսքերը: Արդյունքում ԱՄՆ-ում միշտ գոյություն են ունեցել սփյուռքներ, թեև ազգը եղել է միակը՝ ամերիկյան: Այլէթնիկ գաղթականները գրեթե միանգամից ընդգրկվում էին ամերիկյան ազգի շարքերը: ԱՄՆ-ն դառնում էր նրանց երկիրը, ընդ որում միակը: Իսկ այն երկիրը, որտեղից նրանք հեռացել էին, նրանց համար ուղղակի դարձավ հայրենիք, առաջին սերնդի համար՝ իսկական հայրենիք, իսկ հաջորդների համար իրենց նախնիների հայրենիքը: Բայց նույնիսկ այդ պարագայում սփյուռքը չվերացավ: Փոխարենը արդեն լրիվ ձուլված իռլանդացիներին միանում էին նոր իռլանդացիներ, ու այդ գործընթացը անընդհատ կրկնվում էր: Սփյուռքը անընդհատ համալրվում էր, թարմանում, նորոգվում և այդպես շարունակում էր գոյություն ունենալ:

Նախկինում անգլիախոս իմիգրանտները հեշտությամբ էին փոխում իրենց լեզուն՝ դանդաղ տեմպերով յուրացնելով ամերիկյան մշակույթը: Ամենաբարդ խնդիրը կապված էր նրանց նախորդ ազգային ինքնագիտակցության հետ: Այն շարունակում էր գոյատևել նոր՝ ամերիկյան ինքնագիտակցությանը զուգահեռ:

Ամերիկյան հասարակությունը միշտ եղել է քաղաքականացված: Այնտեղ միշտ քաղաքական պայքար է մղվել, որում ներգրավվել են հասարակության լայն զանգվածները: Քաղաքական գործիչները օգտագործում էին բոլոր միջոցները, որպեսզի ապահովեն հասարակության առավելագույն շերտերի աջակցությունը: Ամերիկայում համախոհների հավաքագրման ձևերից մեկը դարձավ սփյուռքների օգտագործումը: Ասենք, իռլանդացի քաղաքական գործիչը ձգտում էր կենտրոնացնել հատկապես իռլանդական սփյուռքի աջակցության հնարավորությունները, ինչպես նաև այն մարդկանց, ովքեր վաղուց ի վեր դարձել էին լիարժեք ամերիկացիներ,

որոնց նախնիները, սակայն, վերոհիշյալ երկրից էին: Նման քաղաքական գործիչը շահագրգռված էր ոչ միայն այն բանով, որ այդ մարդիկ չմոռանան իրենց հոլանդական ծագումը, այլ որ նրանց մեջ, թեկուզ և մասնակիորեն, վերածնվի հոլանդական ազգային ինքնագիտակցությունը:

Այսպես անընդհատ տեղի է ունենում սփյուռքների քաղաքական համակենտրոնացումը, նրանց վերածումը քաղաքական ուժի:

Ներկայիս համաշխարհայնացման գործընթացներն ընդունված է կապել ԱՄՆ-ի հետ: Այնուամենայնիվ, դրանք առավելապես նախաձեռնվում և ի հայտ են գալիս սփյուռքյան հետաքրքրությունների շրջանակներում, և որպես սփյուռքյան մտածողություն, տարածվում համաշխարհային քաղաքականության վրա:

Սփյուռքների կողմից վարվող այդ քաղաքականության մեջ նույնիսկ ԱՄՆ-ն օգտագործվում է որպես գործիք, երբեմն էլ ի վնաս նրա ազգային պետական հետաքրքրությունների: ԱՄՆ նախագահության նախկին թեկնածու Պ. Բյուքենենը իր «Արևմուտքի մահը» գրքում գրում է, որ համաշխարհայնացման գործընթացից Արևմուտքը նույնիսկ ավելի շատ է տուժել, քան արևելյան դաշինքի երկրները: Բավական է հիշատակել բոլորին հայտնի ԱՄՆ-ի գաղութացման գործոնը Դաշնային պահուստային համակարգի կողմից, որի իշխանությունն ավելի բարձր է, քան ամերիկյան պետության, և որի շահերը աշխարհում ավելի ծանրակշիռ են, քան ամերիկյան ժողովրդի շահերը:

Այս առումով Միացյալ Նահանգների բնակչությունը, որպես ճակատագրի հեգնանք, ինքը հայտնվեց հնդիկների դերում, որոնք ժամանակին քշվել էին ռեզերվացման, իսկ այժմ նրանք դարձել են հոգևոր բնույթի ռեզերվացիա, և ամերիկացիները իրենք կարիք ունեն բարձր մշակույթի ներարկման: Այս պարագայում հայկական Սփյուռքը ևս կարող է օգնել և օգնում է նրանց իր ուժերի ներածին չափով:

ԱՄՆ-ի օրինակով կարելի է ուրվագծել սփյուռքների երկրորդ դասական ժամանակաշրջանը (առաջինը՝ պետությունների հետ հակասությունների շրջանն էր), որը կարիք ունի կազմակերպման. դա տարբեր սփյուռքների միջև հակասությունների շրջանն է, որը երբեմն հասնում է պատերազմի, ինչպես ներկայում միմյանց փորձում են ճզմել մեքսիկական և հայկական սփյուռքները Կալիֆորնիայում: Մրցակցությունն ու հակասությունները սփյուռքյան համայնքների միջև եղել և մնում են ոչ պակաս կարևոր և պատմական գործընթացի էական շարժիչ ուժ, քան պետությունների միջև սոցիալական և կրոնական հակասություններն ու հակամարտությունները:

Այդ հակասությունների սուբյեկտները ոչ թե սփյուռքների ներկայացուցիչներն են, հասարակությունից «անկախ» անհատները, ինչպես դա փորձում է ներկայացնել ազատական գաղափարախոսությունը, առաջնորդվելով իր սեփական հետաքրքրություններով, այլ ինքը՝ էթնիկ սփյուռքը: Պատմական փորձը ցույց է տալիս, որ այս մրցակցությունում հաղթում են այն համայնքները, որոնք առավել

միասնական են և պատրաստ են զոհել համայնքի անդամների շահերը՝ հանուն ընդհանուր նպատակի: Նման համայնքներում անհատի մասնավոր շահը ստորադասվում է ողջ սփյուռքի՝ որպես ամբողջության շահին: Հենց այս մրցունակությունն է ստիպում սփյուռքին ձեռք բերել զաճաճ պետության բոլոր հատկանիշները, քաղաքական կուսակցություններ, որոնք իրենց առջև նպատակ են դնում պաշտպանել իրենց անդամներին և մեծացնել իրենց ազդեցությունը միջավայրի վրա՝ առաջին հերթին պետական իշխանության: Բնականաբար, այդ կազմակերպությունների ուժն ու արդյունավետությունը կախված են բազմաթիվ գործոններից:

Ընդհանուր առմամբ, նման բարդ և ամբողջական երևույթ, ինչպիսին սփյուռքի գոյությունն է, երկար ժամանակ մոռացության էր մատնված, որն էլ թերևս նրա վրեժի պատճառն է: Հանուն իր շահերի՝ սփյուռքն ինքը սկսեց սահմանել իրերն ու երևույթները, կարգավորել քաղաքականությունը, այդ թվում՝ Համաշխարհային: Դա առավել հստակ արտահայտվում է սփյուռքների մշակած փիլիսոփայության և գաղափարախոսության մեջ, որը հետագայում իրենց ոգով կատարելագործեցին ազատականները: Այսօր այդ գաղափարները պատշաճորեն ծառայում են սփյուռքի շահերին: Լայնորեն տարածված ժողովրդավարության, նեոլիբերալիզմի, շուկայական տնտեսության գաղափարախոսությունը և այլնը քաղաքագիտության մեջ ներկայացված են առավելապես այնպիսի ձևերով, որ թույլ են տալիս խոսել սփյուռքի փիլիսոփայության և գաղափարախոսության այնպիսի տարբերակների մասին, որոնք բնորոշ են ազգային պետություններին: Սփյուռքի այս տեսական բաղադրիչներից յուրաքանչյուրում իր թաքուն արտահայտությունն են գտել տիտղոսակիր պետությունների կամ ապազգայնացված միջավայրի կողմից ճնշված նրանց շահերը:

Կարելի է ասել, որ աշխարհի այսօրվա ողջ գաղափարական վերնախավը սփյուռքյան մտածողության արդյունք է: Դա և շուկայական տնտեսությունն է, որը թույլ է տալիս անարգել իրականացնել տարանցիկ տնտեսական գործարքներ՝ պետությունների միջև վերացնելով պատնեշները և միաժամանակ նվազեցնելով նրանց դերը՝ որպես ինքնուրույն տնտեսական միավորի:

Շուկայական տնտեսությունը հնարավորություն տվեց սփյուռքին գերազանցելու իր հիմնական մրցակցին՝ տիտղոսակիր պետությանը, և օլիգարխիկ պետությունների ձևավորման համար բացելու քաղաքական վարագույրները: Նեոլիբերալիզմը իջեցնում է հանրային բարոյականության նշաձողը և զրկում հասարակությանը բարոյական տեսողությունից՝ ամեն ինչ ենթարկելով պահանջարկի «ազատությանը», որը պետք է բավարարվի ցանկացած ձևով: Հարաբերությունների այդ մոդելում, որտեղ նախապատվությունը տրվում է ոչ թե հասարակական շահին, այլ մասնավոր անհատի ազատությանը, անգամ պետական վերահսկողության պայմաններում սփյուռքը գտել է պետության անտեսած իր հատուկ նպատակների իրականացման իդեալական սխեման:

Միաժամանակ Չինաստանի վերափոխումների հաջողված օրինակը, որի համար նրանք պարտական են սփյուռքի օգնությանը, համոզիչ ապացուցում է, որ շուկայական ոչ արդյունաբերական նախագիծը հնարավոր է իրագործել նաև այլ քաղաքական կառույցներում, որոնք ոչ միշտ են ենթադրում վերակառուցման, ժողովրդավարության, մարդու իրավունքների և այլ ստանդարտ փաթեթներ:

Երկրորդ՝ դա նաև ժողովրդավարությունն է, որի չտարբերակվող երկրաչափական պոպուլիզմում սփյուռքի ներկայացուցիչը հնարավորություն է ստանում սեպ խրելու հիերարխիայի և իշխանության ժառանգականորեն փոխանցվող կլանածին համակարգի միջև կամ ծայրահեղ դեպքում անարգել իրականացնելու լոբբիստական գործունեություն:

Երրորդ, դրանք բոլոր հնարավոր կոնվենցիաներն են մարդու իրավունքների գերակայության վերաբերյալ, որոնք սահմանափակում են ազգային պետությունների ինքնիշխանությունը: Այդ խնդիրը և՛ աշխարհը հիմնովին վերաձևելու գաղափարն է, համաշխարհային կառավարության ստեղծումը, որը կհաղթահարի սփյուռքի «ազգային մասնատվածության» հետևանքները, և՛ միջազգային օրենքների ու համաձայնագրերի, ազգային ու այլ օրենսդրական մարմինների ընդունած օրենքների նկատմամբ ՄԱԿ-ի դաշնագրերի գերակայության համոզմունքն է: Օրինակ՝ 1975 թ. եվրոպական պետությունների, ԱՄՆ-ի և Կանադայի ղեկավարների խորհրդակցության ժամանակ Հելսինկիում ստորագրվեց Հելսինկյան համաձայնագիրը, ըստ որի՝ այն ստորագրած բոլոր պետությունները, այդ թվում՝ ԽՍՀՄ-ը, պարտավոր էին պաշտպանել մարդու իրավունքները՝ այն մեկնաբանությամբ, որը նրանք ընդունել էին Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում:

Այդ ակտով օրինականացվեցին մարդու իրավունքների հետ կապված խնդիրները ներպետականից «վերաձևելու» և դառնալու գերազգային, ինչպես նաև դառնալու միջպետական իրավաբանական և քաղաքական կատեգորիաներ:

Իսկ այնպիսի միջազգային կազմակերպություններին, ինչպիսիք են ՄԱԿ-ը և ԵԱՀԿ-ն, տրվեց համաշխարհային վերպետական կառույցների կարգավիճակ և մարդու իրավունքների պաշտպանության պատրվակով այլ պետությունների գործերին միջամտելու բացահայտ իրավունք:

Մարդկանց հետևելու այսօրվա էլեկտրոնային միջոցները լրացնում և ամբողջացնում են «ազգերի համաշխարհային փարախ» ստեղծելու այս հակամարդկային միտումը, որը միշտ գտնվելու է անթարթ հայացքի ներքո:

Եվրոպայի ժողովուրդների վզին այսօր փաթաթել են մի միասնական սահմանադրություն, որը խաթարում է ինքնիշխանությունը, որը, ըստ եվրոպական պետությունների մեծամասնության օրենքների, հռչակվել է որպես հիմնական արժեք:

Լիսաբոնյան համաձայնագիրը ուժեղացնում է Եվրամիության հակաժողովրդավարական և հակասոցիալական բնույթը, որով պետությունների բոլոր իրավունքները, ներառյալ պատերազմ հայտարարելու իրավունքը, ինչպես

նաև եվրոպացիների կյանքի գրեթե բոլոր ոլորտները վերահսկելու լիազորությունը փոխանցվում են ԵՄ-ին:

Սփյուռքներն առավել ակտիվորեն են պրոպագանդում «համընդհանրական» ազատական գաղափարները, ինչպես քաղաքական կուսակցությունների կրթական ազատությունը, խոսքի և հավաքների ազատության առաջնահերթությունը, անհատի շահերի գերակայությունը հասարակական և նույնիսկ ազգային շահերից: Սփյուռքների ակտիվության բարձրացման ազդակներ են պետությունների բռնած կիսատ-պռատ, թերի գործերը:

Ազգային սփյուռքների շահերի անտեսումը, նվազեցումը, ինչպես նաև ճնշումը ի հայտ են բերում ուժեղ հակազդեցություն, որն արտահայտվում է նրանց միավորմամբ, արթնացնում է գիտակցված ինքնակազմակերպման ձգտում, որի պտուղը դառնում է այն կառույցը, որը շատ հարցերում զուգահեռաբար գոյակցում է բնակության երկրի պետության հետ:

Հենց հակազդեցությունների այս դաշտում էլ պետության ճնշմամբ ի հայտ են եկել և ամրապնդվել են սփյուռքների վրիժառության, հատուցման տնտեսական և գաղափարական լծակները:

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը կարող ենք համարել վրեժխնդրության իրագործում: Բավական է ասել, որ ճգնաժամի հետևանքով ամենահզոր ամերիկյան բանկերը վերախմբավորվեցին և դարձան գերհզորների բռունցք. ԱՄՆ-ի ֆինանսական կարողությունը նախկինում երբեք չի հասել այս աստիճանի համակենտրոնացման: Եթե 1990 թ. երկրի ֆինանսական ակտիվների 10%-ին տիրում էին մեկ տասնյակից ավելի խոշոր ամերիկյան ֆինանսական հաստատություններ, ապա 2008 թ. այդ թիվը հասել է 50%-ի: Ավելին, ԱՄՆ-ի պետական բյուջեից միլիարդների արտահոսքը դեպի մասնավոր բանկեր ակնհայտորեն ողջ աշխարհին ցույց տվեց սփյուռքյան փիլիսոփայության հաղթանակը և պետության ամոթալի պարտությունը, ընդ որում մոլորակի ամենաուժեղ պետության:

ԱՄՆ-ի բնակչության երկչոտ առարկությունները և բողոքները, որ իրենց վաստակածը տրվում է բանկերին, ոչ մի ազդեցություն չունեցան:

Բարաք Օբաման կարգված էր սրբորեն պաշտպանելու Դաշնային պահուստային համակարգի սեփականատիրոջ շահերը, առաջին հերթին, աջակցել դոլարային խաբեությանը: Չէ՞ որ որպեսզի բանկային վարկի վրա հիմնված և համարժեք ոսկի չունեցող փոխարժեքային համակարգը գործի, պետք է արհեստականորեն առաջացնել դրամի պակասուրդ և այն դարձնել պարբերական:

Պատճառներից մեկն այն է, որ այսօրվա փոխարժեքային համակարգը ինքնակարգավորվող չէ, այն կարիք ունի պակասուրդ ապահովող ակտիվ կենտրոնական բանկերի:

Աշխարհում, սակայն, նման կարգի դեմ ի հայտ է եկել բավական ուժեղ ընդդիմություն: Չինական սփյուռքը ևս միամիտ չէ. նա օրինակ է վերցրել ԱՄՆ-ից,

կռահում է ֆինանսական ծանր իրավիճակները, դոլարի արհեստական գինը և որոշել է ստիպել Դաշնային պահուստային համակարգին խաղալ իր կանոններով: Այժմ արդեն հովանավորչության մեջ մեղադրանքներն ուղղվել են ԱՄՆ-ին: Չինաստանի պետական քաղաքականությունը կանգնած է իր սփյուռքի թիկունքում, և հնարավոր է, որ ևս մի շարք պետությունների աջակցության դեպքում սկսվի աշխարհի փոխակերպում և նոր կարգերի հաստատում:

Սփյուռքները՝ կամուրջներ երկրների միջև: *Գոյություն ունի այսպիսի սոցիալական պարադոքս. գործի տերը ղեկավար է կարգում բանիմաց աշխատողին, բայց ոչ այնքան բանիմաց, որ կարողանա խորամանկությամբ շրջանցել տիրոջը: Կառավարիչը պետք է իրագործի տիրոջ մտահղացումները և կասկածի տակ չառնի դրանց ճշմարտացիությունը: Սակայն բիզնեսի կամ ցանկացած այլ գործունեության բարդացմանը զուգահեռ՝ անհրաժեշտ է փնտրել առա- վել բանիմաց, բայց կատարող աշխատակիցների: Ինչ-որ պահից բանիմացությունն ու կատարողականությունը սկսում են հակադրվել միմյանց: Ժամանակակից՝ հատկապես տեղեկատվությամբ հագեցած արդյունաբերությունը պահանջում է չափազանց բանիմաց, այսինքն՝ ինքնուրույն դատող աշխատողներ: Սակայն դա հակասում է գործատիրոջ հետաքրքրություններին, այնքանով, որ կորցնում է վերահսկելու հնարավորությունը, մի բան, որը վեր է նրա կարողություններից: Այդ դեպքում նա ընտրում է շրջապատի դեգրադացման ռազմավարություն, որպեսզի արգելակի մարդկային կյանքի բարդացման բնական գործընթացը: Մենք համաշխարհային զարգացման հենց այս փուլում ենք և հուսով ենք, որ այն շուտով կավարտվի: Զարգացման էվոլյուցիոն գործընթացներն անհնար է կանգնեցնել: Խոտի ծիլն աճում է՝ անգամ ծակելով ասֆալտը: Կարևորն այն է, որ չարվեն կտրուկ շրջադարձեր, չվազանցվի գործ- ընթացը, ոչինչ չփոխվի ձեռք բերվածի մեջ: Ամենավտանգավորը մահամերձ հին աշխարհի ազդեցության տակ գտնվելն ու նրա հոգևարքի ցնցումները վերջին պատգամի փոխարեն իրագործելն է:*

Այդ աշխարհի հիմնական ազդակը ամեն ինչ դագաղ մտցնելն է, արյան, պատերազմի մղել այն ամենը, ինչ շարժվում է, ինչ առանձնանում է «զոմբիացված» բնակչության գորշ ֆոնից: Թուրքիային դրդելը ևս այդ շարքից է: Եթե Արևմուտքը չի կարող վերահսկել հայերին, ուրեմն թող դրանով զբաղվի նրա դարավոր թշնամին, նրա ձեռքից դա գալիս է, նա հրաշալի փորձառություն ունի: Հետո ամեն ինչ կարելի է վերագրել թուրքերի բարբարոսությանը:

Այսուհանդերձ, աշխարհում արդեն երևում են հետճգնաժամային կարգավորման ծիլերը: Դա նախևառաջ հեռացող աշխարհի գործիչների ու պարագլուխների՝ Իտալիայում Բեռլուսկոնիի, Իսրայելում՝ Օլմերտի, Անգլիայում՝ Բլերի, ԱՄՆ-ում Բուշի դատապարտումն ու նույնիսկ դատական հետապնդումն է և Արևմուտքի երկրներում ներքին բողոքի աճը:

Երկրորդը՝ ազատագրումն է ազատականության պատրանքից և ազգային տնտեսությունների պետականորեն ամրապնդումը, հովանավորչությունը և

միջազգային վերջնահաշվարկների կիրառումը սեփական տարադրամի տեսքով, օրինակ՝ ռուբլին կամ իենը:

Երրորդ՝ սփյուռքները սկսում են հենվել այլ տարրերի վրա, որոնք մնացել են նրանց գաղափարախոսությունից դուրս: Այդ տարրերն էլ հնարավորություն են տալիս առաջ քաշելու նոր սփյուռքյան փիլիսոփայությունը և գաղափարախոսությունը՝ համատեղելով և ինչ-որ տեղ նույնացնելով պետությունն ու սփյուռքը:

Այսպիսին են նոր սփյուռքյան փիլիսոփայության ուրվագծերը, որը կարելի է համարել դասական համադրություն՝ պետության շահ-Սփյուռքի շահ-փոխադարձ շահ երրորդության եզրափակում: Անկախ պետության և դրանում առկա այլ սփյուռքների մրցակցային հարաբերություններից՝ գոյություն ունեն նաև մի շարք գործոններ, որոնք ունակ են այդ սփյուռքներին համաշխարհային մասշտաբով դարձնելու համերաշխության և արարման առաջատար: Այդ ներուժը կարող է դրսևորվել ոչ միայն բնակության երկրի և պատմական հայրենիքի պետական կառույցների միջև կապերի ամրապնդման ուղղությամբ, այլև սոցիալական այդ կապիտալը ամբողջ աշխարհում բազմացնելով ու տարածելով, պահպանելով բազմաթիվ անձնական ու հասարակական կապերը, բարեկամությունն ու համագործակցության այլ ձևերը, վստահությունն ու փոխըմբռնումը բոլոր ազգերի և ժողովուրդների միջև:

Բոլոր գունավոր հեղափոխություններն իրականանում են սոցիալական կապերի քայքայմամբ: Սփյուռքյան ժողովրդական դիվանագիտությունը կարող է խոչընդոտել պայթյունավտանգ գործունեությունները, իր ձեռքը դնելով ամբողջ աշխարհի ինքնազգացողության զարկերակի վրա՝ տեղեկատվական աղբյուրների ճյուղավորման շնորհիվ:

Այն սփյուռքները, որոնք ստեղծված իրավիճակում գիտակցում են իրենց առաջատար դերը, դառնում են նոր գաղափարախոսության ուղեցույցներ, պետությունների և սփյուռքների շահերի երաշխավորներ, որոնք այժմ մեկը մյուսի կարիքն ունեն: Որո՞նք են այս նոր աշխարհայացքի տարրերը:

Գտնվելով ճգնաժամի մամլիչի տակ՝ աշխարհը կարիք ունի ստեղծագործ կենսակերպի: Անչափելի տառապանքի և ավերումի դարերը պետք է ի վերջո մարդկությանը բերեին արարման գիտակցությանը՝ որպես մարդկային մշակույթի կարգավորման կարևորագույն միջոցի: Համաշխարհային և գլոբալ ինստիտուտների, կառույցների նպատակն աստիճանաբար դառնում է մարդու ստեղծագործ գործունեության պաշտպանությունը, բնությունն ու մարդու հրաշալի ստեղծագործությունները ավերելու անթույլատրելիության մթնոլորտի ձևավորումը: Համաշխարհային կառույցները պետք է աջակցեն ազգերին և պետություններին՝ կողմնորոշվելու դեպի ստեղծագործական գործունեությունը, սահմանափակելու, զսպելու ազգերի ու պետությունների ավերիչ գործողությունները՝ թույլ չտալով հասնել այն կարևորագույն սահմանագծին, որը տարանջատում է

բարբարոսությունը մշակույթից: Հնագույն քաղաքակրթություններում այդ կարգավորվածությունը եղել է փիլիսոփայական և կրոնական ոլորտի առանցքը: Կյանքը սրբություն է, և յուրաքանչյուր արարածի կյանքը տիեզերքի համար իր նշանակությունն ունի: Անմիտ պատերազմներին, այլն հաշվենկատ «բաժանիր և տիրիր» քաղաքականությանը պետք է միջազգային իրավական սահման դրվի: Ընդունված Հիմնական վարքագիծը պետք է դառնա «միացրու և բարգավաճիր»: Մարդկության զարգացումն ուղղակիորեն ընթանում է այս ուղղությամբ, և թեև հազարավոր տարիներ են բաժանում մեզ այն անհատներից, ովքեր մարդկային անհատականությունը հռչակեցին որպես սրբություն, այսուհանդերձ, մենք դարձյալ հանգել կամ հանգելու ենք այդ սկզբունքին: Ժամանակն է ընդունել դրանք որպես համամարդկային արժեքներ և հետևություններ անել՝ հաշվի առնելով անցած XX դարը:

Աշխարհի ժողովուրդներն ու կառավարությունները պետք է ընդունեն օրենսդրական փորձը, որը կարգելի անհատների ապակառուցողական, հակասոցիալական գործունեությունը, ազգային և սոցիալական այնպիսի կրթությունը, որը փորձում է մարդկությանը վերադարձնել բարբարոսության դարաշրջան: Սակայն ի՞նչ ենք հասկանում հակասոցիալական գործունեություն ասելով: Սոցիալական չարիքի որոշ դրսևորումներից ձերբազատումը անհնարին է՝ առանց բացահայտելու այդ չարիքի բնույթն ու պատճառները, նրա ծագումնաբանությունը: Այդպիսի «ծրագրերը», ինչպես ժողովուրդը կասեր՝ հոնքը սարքելու փոխարեն աչքն են հանում:

Բոլորի համար պարզ է, որ տեխնիկական կառույցների փոփոխման այնպիսի հակատեխնիկական ծրագիրը, որն իրականացվում է առանց դրանց պլանավորված բարելավման՝ տների, կամուրջների, էլեկտրական լարերի, խողովակատարերի և այլնի քայքայում է. դա, կոպիտ ասած, տեխնիկական միջավայրի կործանում է: Սակայն քչերն են մտածում, որ հակասոցիալական վարքագիծը քայքայում է սոցիալական միջավայրը՝ ի հայտ բերելով արհեստական հակասություններ, սերմանելով թշնամություն և երկպառակություն, խախտելով և ոտնահարելով սոցիալական նորմերն ու կանոնները, և, որպես կանոն, ենթարկվում է ոչ թե քրեական, այլ բարոյական պատասխանատվության:

Հենց հակասոցիալական վարքագիծն է XX դ. չարիքի արմատն ու պատճառը, ներառյալ այսօրվա ֆինանսական ճգնաժամի պատճառը: Հողը փորելով՝ քանդել-հանել արմատը, նշանակում է մինչև իրական թափանցիկություն մերկացնել քաղաքական շարժառիթները, մարդկությանը բարձրացնել մինչև ստեղծագործ վարքագծի և իրական ժողովրդավարության բարձունքի: Ստեղծագործական գոր-ծունեությունը ենթադրում է զարգացման հետևյալ փուլերի անընդհատ բարդացում՝ գիտական, տիեզերական, միկրոկենսաբանական և այլ տեխնոլոգիաների արագ տարածում, որը համապատասխանում է ոչ թե առանձին խմբերի, այլ ողջ մարդկության շահերին: Հասկանալու համար, թե ինչու է այդպես, ընդամենը պետք է

հիշել, որ ոչ մի փոքր բիզնես ընդունակ չէ իրագործել տիեզերական նախագծեր: Որքան հանգամանորեն է բաժանված պետական և հանրային ունեցվածքը՝ առանց համապատասխան փոխհամաձայնեցման, այդքան պարզունակ և հեշտ է իրականացնել գործողություն, որի հիման վրա փոքր բիզնեսի շրջանակում կարելի է համարձակ քայլերի դիմել: Միաժամանակ մանրանում, արժեզրկվում է մարդու էությունը, առանց լուրջ ծրագրերի բնակչությունը և նրա ղեկավարությունը կգլորվեն դեպի քաղաքական սնանկության, անսկզբունքայնության և ճղճիմ հաշվենկատության անդունդ:

Ավելին, առանց ողջ մարդկության համատեղ ջանքերի և ստեղծագործ գործունեության ընդհանուր ծրագրի անհնար է խոսել նրա ապագայի մասին: Իսկ պետությունն իր ապագան ծրագրավորելու խախուտ ունակությամբ ձեռք է բերում թույլ արտահայտված լեգիտիմություն: Նրանում իշխանությունը տապալվում է այն թատերականացման օգնությամբ, որը հիմնված է ամբոխի գրգռվածության, քրեական տարրերի ներգրավվածության և ցանկացած կառուցողականության մերկ ժխտման կանոններով: Սակայն նման թատերականացման արդյունքները բերում են սոցիա-լական կարգի փոփոխության, բնակչությանը իր լեգիտիմ իշխանության իրավունքից զրկելուն և իրենց քաղաքակրթական ուղղվածության որոշակիացմանը: Ապագայի ծրագրավորումը նախկինում պարզապես ճնշվում էր, այժմ վերանում է: Իսկ կարգը և գաղափարախոսությունը հանձնարարվում է դրսից: «Ապագայի ծրագրի» մշակումը և ներկա ճգնաժամից դուրս գալու ելքը կարող է կայանալ նոր «հավաքի» շրջանակում, պետության և սփյուռքների շահերի ձուլման ճանապարհով՝ վերականգնելով և համադրելով մշակութային և աշխարհընկալման միջուկը՝ յուրաքանչյուրի կողմից պատմական քաղաքակրթական ուղու որդեգրմամբ: Դրա համար անհրաժեշտ է պետությունների քաղաքական համակարգերի նորացում: Նորացման մաս պետք է կազմի այնպիսի կազմակերպչական ձևի ի հայտ գալը, որը կառուցված կլինի քաղաքակիրթ սկզբունքներով և հենված կլինի կառուցողականության և համերաշխության հայեցակարգի ու սկզբունքների տարբեր համադրումների վրա, որպես ցանկացած հասարակական-քաղաքական գործունեության կենտրոնական հասկացություններ:

Նոր փիլիսոփայությունը սփյուռքների միջև մրցակցությունից և պետության դեմ պայքարից շեշտադրությունը տեղափոխում է դեպի ներկայիս համաշխարհային տիրույթում սփյուռքների առավել կարևոր գործառույթների վրա՝ որպես ժողովուրդների կամուրջների, առավել արդյունավետ աշխատանքի միջավայրի, որպես տեղեկատվության տարածման աղբյուրների, տնտեսական և մտավոր փոխանակման, սոլիդարիզմի դրսևորման ոլորտի: Համընդհանուր ինտեգրման փիլիսոփայությունը, որպես սփյուռքների և պետությունների նոր փոխհարաբերությունների դաշտ, պետք է, ամենայն հավանականությամբ, համաշխարհային հանրության ձևավորած առանձնահատուկ մթնոլորտում հանդես գա ճարտարապետի դերում: Ազգերի և պետությունների միջև անհրաժեշտ է փոխըմ-

բռնման մի առանձնահատուկ ոգի, որը հիմնված լիներ մարդկային փոխհարաբերությունների մարդասիրական ազդակների վրա:

Սոլիդարիզմը սփյուռքի վզին չի փաթաթում այն նպատակները, որոնք օտար են իրեն, և նրանք անհատական շահը չեն զոհաբերում «համընդհանուր բարիքին», եթե դա համերաշխ խմբի անդամներին շահ չի բերում: Բայց մյուս կողմից այն բանի գիտակցումը, որ անհատն ի վիճակի չէ բավարարել իր հետաքրքրությունները առանց հասարակության և պետության, հարկադրում են նրան ենթարկվել հասարակական կարգի այն պահանջներին, առանց որոնց պահպանման նա գոյության պայքարում կդառնար անպաշտպան:

Սփյուռքի և պետության միջև հարաբերությունների նորմերը կայանում են որպես երկու իրավական սուբյեկտների համաձայնություն, որոնց նպատակների և խնդիրների բովանդակությունը առավելագույնս են համապատասխանում միմյանց:

Սոլիդարիստական տնտեսությունը կազմակերպչական բնույթ է կրում, ոչ թե ենթարկվելով կենտրոնում մշակված պլանին, այլ միաբնույթ հետաքրքրությունների ոլորտում՝ համագործակցելով, աշխատակցելով, փոխօգնությամբ և փոխհամաձայնությամբ:

Պետական իշխանությունը պետք է լինի դիմացկուն, քանի որ համերաշխությունը պետության վրա դնում է կարևոր միջնորդական գործառույթների պատասխանատվություն, որը պահանջում է իշխանության բարձր հեղինակություն և միմյանց հակասող շահերի համաձայնության համար լայն լիազորություններ: Սոլիդարիզմի հիմքի վրա կառուցված պետությունը պետք է ներթափանցված լինի հանրության ոգով: Պետությունը ոչ միայն պետք է համագործակցի, այլև խրախուսի, քաջալերի ընդհանուր հետաքրքրություններ ունեցող քաղաքացիների միավորումը և պետական իշխանությունում հատկացնի նրանց շահերը պաշտպանող հեղինակավոր ներկայացուցչություն:

Սոլիդարիզմի վրա հիմնված պետությունը կերտում է իր առանձնահատուկ տեսակը: Այդ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ստեղծվում է միմյանց հետ համերաշխ հասարակական կազմակերպությունների հիերարխիա, որը, հնարավորության սահմաններում ընդգրկելով ողջ բնակչությանը և ներկայացնելով նրա շահերը զուգահեռաբար գոյություն ունեցող կազմակերպություններում, ձգտում են ոչ թե կլանել մեկը մյուսին կամ տխրահռչակ «միավորման», այլ պետության մեջ փոխհամաձայնեցված համագործակցության՝ որպես բարձրագույն միասնականության:

Սոլիդարիզմը ենթադրում է նրանց ինքնագործունեությունը, ում վարքագիծը համապատասխանում է պետության շահերին և չի հակասում դրանց: Պետությունը չի պարտադրում իր կամքը որպես ինչ-որ յուրահատուկ մի բան՝ հաշվի չառնելով քաղաքացիների կամքը: Սոլիդարիզմը իրականացվում է, եթե ոչ հակադիր, ապա գոնե տարաբնույթ խմբերի և հոսանքների առկայության դեպքում, որոնցից յուրաքանչյուրը վաստակել է իր գոյության իրավունքը:

Համերաշխ պետությունը չի սահմանափակում ձեռներեցությունը, իր վրա չի վերցնում տնտեսական խնդիրները և կանխորոշում է ազատության որոշակի սահմաններ, ապահովում է այդ ազատությունը իր նախանշած սահմաններում, այն միայն վերահսկում է, ոչ թե կառավարում: Տնտեսական մարմինների գործունեությանը նրա միջամտությունը խիստ սահմանափակ է՝ այն թույլատրելի է կամ պետական և մասնավոր շահերի տարանջատման, կամ առանձին արդյունաբերական խմբերի շահերի բախման, հակասությունների դեպքում, որոնք նրանք ինքնուրույնաբար չեն կարողանում լուծել: Համերաշխությունը բացառում է և՛ ազատական պետության պասիվությունը, և՛ սոցիալիստական պետության հավակնոտությունը:

Պետական կառուցվածքի և հասարակական ինստիտուտների հենց այդպիսի տիպն է համահաշտեցնում պետության և սփյուռքի շահերը և ապահովում է նրանց արդյունավետ համագործակցությունը՝ ի շահ ամբողջի:

Ժողովուրդների հետ շփման ավանդական փորձ և դիվանագիտական նրբանկատություն ունեցող, գաղափարների և տեղեկատվության փոխանակման գործընթացներում ուղեկցողի դեր ստանձնած սփյուռքները կարող են առաջատար դեր ունենալ նաև այս գործընթացներում, որոնք ուղեկցվում են նոր գաղափարների համադրմամբ և նախորդ դիրքորոշումների արմատականությունը՝ ռադիկալիզմը հաղթահարելով:

Շատ լայն հեռանկարներ և գայթակղիչ հնարավորություններ են բացվում նաև հայկական սփյուռքի առջև, որը լիովին կրում է հետճգնաժամային աշխարհի կողմից առաջադրվող որակները:

Նոր սփյուռքյան փիլիսոփայության ուրվագծերը ի հայտ են գալիս այն շահերի համադրման շնորհիվ, որոնք ամբողջացնում են պետության շահ–սփյուռքի շահ–փոխադարձ շահ երրորդությունը: Դրա իրագործմանը և միաժամանակ համաշխարհային իրավիճակի առողջացմանը կնպաստեն բնակության երկրի և պատմական հայրենիքի միջև հարաբերությունների կարգավորումն ու ամրապնդումը:

РОЛЬ ДИАСПОРЫ В ФОРМИРОВАНИИ МИРОВОГО ПОРЯДКА

ГРИГОРЯН Э. Р.

Резюме

Диаспора оказывает серьезное идеологическое и нормативное воздействие на построение мировых институтов. Когда разрозненные фрагменты этноса разбросаны на обширных территориях многих государств, то в условиях необходимости объективной защиты своих интересов от давления государства логически оправданным вариантом поведения становится стратегия интернационализации своих взглядов – превращения их в метаэтнические,

“общечеловеческие” и представления их на более высоких надгосударственных уровнях – на межгосударственном и международном, в формате мировых организаций, вплоть до мировых правительств. Сегодняшние процессы глобализации в большой степени инициированы противоречиями между государственными и диаспоральными интересами, являясь экстраполяцией диаспорального мышления на мировую политику. Однако сформулированное нами в качестве социологического закона утверждение о том, что из интересов диаспоры вытекает поддержание стабильных и дружественных отношений страны происхождения с государством проживания, создает основу для более мирных и консолидированных отношений между государствами, что делает актуальным введение в международный оборот идеологии солидаризма.